ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/11-3569
«24» 06 2025 թ.

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+374 10) 44-34-80, (+374 60) 37-26-56
Հեռ.՝ (+374 10) 44-29-04, (+374 60) 37-77-37

«ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ԱՐՇԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 02918838
ք. Երևան, Թումանյան 8
հեռախոս 096-70-11-06
էլ.հասցեն՝ am.llc24@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «Աքսել» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-1» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է՝ 1.466.400 ՀՀ դրամ:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «Աքսել» ՍՊԸ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի մայիսի 26-ը, մատակարարել աթոռ 80 հատ և նստատեղ 30 հատ, որի ընդհանուր գումարը կազմում է **1.466.400 ՀՀ դրամ:**

09.05.2025թ.-ին գրությամբ «Աքսել» ՍՊԸ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքը ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը անհրաժեշտ է պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ տալ պարզաբանում և մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, սակայն «Աքսել» ՍՊԸ-ն

ուղարկված գրությանն արձագանք չի տրվել, ինչպես նաև հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է, որ հրաժարվում է մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Արդյունքում՝ «Աքսել» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցն, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի հունիսի 24-ին, միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Աքսել» ՍՊԸ-ի միջև 08.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-1» ծածկագրով պայմանագիրը՝ 1.466.400 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «Աքսել» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900001008375 հաշվեհամարին փոխանցել **14.664 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 24.07.2025թ. և **7.332 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «Աքսել» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Վաճառողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **201.000 (երկու հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **301.500 (երեք հարյուր մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ.-ի հուլիսի 3-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **201.000 ՀՀ դրամ՝** պայմանագրի կատարման ապահովման և **301.500 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ընդհանուր **502.500 ՀՀ դրամն**, ապա «Աքսել» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև տույժի և տուգանքի վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ.-ի հուլիսի 3-ը** ներառյալ, ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: